ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 520 - L

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ՝ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 15.01.2021թ. N 23-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2021 թվականի օգոստոսի 24-ի նիստիարձանագրության 5.10 կետը՝

որոշում եմ.

1. Հաստատել՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի մասնավոր սեփականություն հանդիսացող որոշ հողատարածքների ժամանակավորապես՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով երկու պետությունների միջև սահմանազատումը, օգտագործման տեսակետից անհասանելի դարձած հողամասի սեփականատերերին աջակցություն ցուցաբերելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարին. սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռօրյա ժամկետում ստեղծել աշխատանքային խումբ՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով սահմանամերձ բնակավայրերում սեփականության իրավունքով իրենց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու հնարավորությունը կորցրած քաղաքացիներին աջակցություն ցուցաբերելու աշխատանքները համակարգելու նպատակով մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների ընդգրկմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ /Ս. Հարությունյան/

Հաստատված
Կառավարության 2021 թվականի
դեկտեմբերի 14-ի N 520-Լ որոշման

ԿԱՐԳ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ՝ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի մասնավոր սեփականություն հանդիսացող որոշ հողատարածքների ժամանակավորապես՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով երկու պետությունների միջև սահմանազատումը, օգտագործման տեսակետից անհասանելի դարձած, սեփականության իրավունքով իրենց պատկանող հողատարածքները տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու հնարավորությունը կորցրած քաղաքացիներին (հողամասի սեփականատերերին, համասեփականատերերին) աջակցություն ցուցաբերելու հետ կապված հարաբերությունները,

2. Սույն կարգի շահառու են հանդիսանում Սյունիքի մարզի այն քաղաքացիները, ովքեր 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով ժամանակավորապես կորցրել են սահմանամերձ բնակավայրերում սեփականության իրավունքով իրենց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները օգտագործելու հնարավորությունը:

3. Աջակցությունը շահառուներին տրամադրվում է վարչապետի 15.01.2021թ. N 23-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2021 թվականի օգոստոսի 24-ի նիստի արձանագրության 5.10 կետի համաձայն, միանվագ դրամական օգնության ձևով, հետևյալ չափերով.

- յուրաքանչյուր մեկ հեկտար վարելահողի համար՝ 200 հազար դրամ,
- յուրաքանչյուր մեկ հեկտար այգու համար՝ 500 հազար դրամ:

4. Շահառուների ցանկը պարբերաբար կազմում և Սյունիքի մարզպետի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանում ստեղծված՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով սահմանամերձ բնակավայրերում սեփականության իրավունքով իրենց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները տիրապետելու,

տնօրինելու և օգտագործելու հնարավորությունը կորցրած քաղաքացիներին աջակցություն ցուցաբերելու աշխատանքները համակարգող աշխատանքային խումբը (այսուհետ՝ Աշխատանքային խումբը):

5. Սյունիքի մարզպետի կողմից հաստատված շահառուների ցանկը, վճարման համար, ներկայացվում է Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ:

6. Շահառուների ցանկի կազմման ընթացակարգը.

6.1 Համապատասխան համայնքի ղեկավարը մարզպետարան է ներկայացնում շահառուների նախնական ցանկը՝ ըստ տրված ձևաչափի (հավելված 1)՝ կազմված հողամասի սեփականատեր ընտանիքի գլխավոր անդամի անունով, ինչպես նաև քաղաքացու դիմումը՝ ստորագրված համասեփականատերերի կողմից, ցանկում ներառված շահառուի անձնագրի պատճենը, հողի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

6.2 Աշխատանքային խումբը նախնական ցանկի տվյալները համադրում է մարզպետարանի և Կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման տվյալների հետ ու դրանք համընկելու դեպքում՝ ներառում շահառուների վերջնական ցանկում (հավելված 2):

6.3 Տվյալների անհամապատասխանության դեպքում Աշխատանքային խումբը լրացուցիչ ուսումնասիրություններ է կատարում (անհրաժեշտության դեպքում՝ տեղում, համագործակցելով ՀՈՒ և ՍՀ համապատասխան ստորաբաժանումների հետ) և տվյալները ճշգրտելուց հետո դրանք ներառում շահառուների հիմնական ցուցակում:

6.4 Հողի սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված լինելու (բաժնային սեփականություն) դեպքում համայնքի ղեկավարը ցուցակում ներառում է հողի բաժնային սեփականության մասնակիցներին և յուրաքանչյուրին տրամադրվում է ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ գումար:

6.5 Հողի սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված չլինելու (համատեղ սեփականություն) դեպքում համայնքի ղեկավարը ցուցակում ներառում է այն համասեփականատիրոջ անունը, ով պարտավորվում է իր անվամբ ստացված օժանդակության գումարը համամասնորեն հատկացնել (տրամադրել) մյուս համասեփականատերերին:

7. Աշխատանքային խումբը քննարկում է շահառուներից (քաղաքացիներից) ստացված դիմումներն ու առաջարկությունները, ճշտում է շահառու անձանց ցուցակները, իրականացնում է փոխհատուցումների տրամադրման աշխատանքները:

12/14/2021

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հավելված 1
Սյունիքի մարզպետի 2021 թվականի
դեկտեմբերի 24-ի 340-Լ որոշմամբ հաստատված
կարգի

Ցանկ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱՋԵՐԾՎԱԾ ՊԵՏԻՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ

Հ/Հ	Հողի սեփականատիրոջ (գլխավոր անդամի) ազգանունը, անունը, հայրանունը	Բնակավայրը	հողամասի գտնվելու վայրը	Հողի սեփականության իրավունքի պետ. Գրանցման վկայականի համարը, տրման ամսաթիվը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի տեսակը	Անհասանելի դարձած հողամասի չափը (հա)	

Աղյուսակ 2
ՀՀ Սյունիքի մարզպետի 2021 թվականի
դեկտեմբերի 14-ի N 320-Լ որոշմամբ հաստատված
կարգի

Ցանկ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՃՇԳՐՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ

Հ/Հ	Հողի սեփականատիրոջ (գլխավոր անդամի) ազգանունը, անունը, հայրանունը	Բնակավայրը	հողամասի գտնվելու վայրը	Հողի սեփականության իրավունքի պետ. գրանցման վկայականի համարը, տրման ամսաթիվը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի տեսակը (վարելահող, այգի)	Անհասանելի դարձած հողամասի չափը (հա)	Շահառուին ցուցաբերվող օժանդակության չափը դրամ	Այլ նշումներ